

5792

244
4 - 89

Հայոց մայակ առ պատմութեան

Տրամադրութեան

1 OCT 2009

« ԱՐՄ ԼՈՒՐԻ »

ՀՐԵՍ ԵՐԵԿԱԿԹԻՒՆ

ՓՈՔՐԻԿ ԵՐԳՉՈՒՀԻՆ

Բ Ա Գ Ո Ւ

Տպարան Ա. Ա. Թագավորականի կողմէ կազմակերպութեան

1908

244
Կ - 89

Հրանտ

Դ. Խաչ, Ռ. Խաչ

244
Կ-89

ՓՈՔԻԿ ԵՐԳՉՈՒՅՑԻՆ

«Ոչ, ոչ. ես չեմ կարող ընդունել ինչ որ
չեմ հասկանում», ասեց պարոն Բ.-Ն. իր բարե-
կամ Հ.—ին, որը քանի ժամ էր աշխատում էր
իր անհաւատ բարեկամին հաւատքի բերելու,
բայց չէր յաջողվում:

Հ.—ն արտմած հեռացաւ գնաց: Վեց տար-
էր արդէն, որ նա ճանաչել էր Աստուծոյ զթա-
ռատ սէրը և խաղաղութիւն գտել Յիսուսի պատ-
ւական արխնով: Նա շատ ցաւում էր իր երի-
տասարդութեան բարեկամի հոգու զրութեան
համար և ամեն պատեհութիւնից օգտվում է,
որ փրկութեան բարի լուրը նրան լսեցի:
Բայց թւում էր որ իր բարեկամը օրսոօ-
րէ աւելի խստանում էր իր սրտի անհաւատու-
թեան մէջ:

Սակայն և այսպէս Հ.—ն չէր կարողանում
նրանից ձեռ քաշել, որքան էլ կոպիտ խօսքեր.
Էր լսում իր բարեկամից, բայց էլի զնում էր
նրա մօտ: Նրա բոլոր վիրաւորանքներին հան-
գել ցոյց էր տալիս նա իր անխախտելի հեգու-

28 AUG 2013

5792

— 4 —

թիւնը, և չէր ձանձրանում նրա համար ա-
լօթելու:

Մի օր երկու բարեկամները միասին մի
հիւրանոցում ճաշում էին: Երբ արդէն ճաշը վեր-
ջացրել էին և կամենում էին վեր կենալ զնար,
նախասենեալից մի երեխայի քաղցր երգեցողու-
թեան ձայնը լսվեց:

«Ի՞նչ մաքուր ու գեղեցիկ ձայն է», ասեց
Բ.—ն, և նոյն բոպէին լսվեց ինչպէս ծառան կո-
պիտ ձայնով հրամայեց փոքրիկ երգչուհին, որ
նա շը շարունակէ երգը:

«Թողէք երեխային ներս դայ», ասեց Բ.—ն,
բարեկացած ծառային, բայ անելով սենեակի
դուռը:

«Ոչ», պատասխանեց ծառան. «մեզ սաս-
տիկ պատւիրված է, որ այդպիսիներին ներս չը
թողնենք սեղանատունը:—Բայց եթէ կամենաք
լուն նրա երգելը զրասենեալում, ես դրա դէմ
բան չունիմ»:

«Սիայն թէ լսենք այդ քաղցր ձայնը, թէ
որտեղ, այդ մի և նոյն է», ասեց Բ.—ն իր
բարեկամին, «Եկ, զնանք ընթերցանութեան
սենեակը»:

Եւ նա զնաց աղջկայ ենիկից, որ զուցէ 12
տարեկան լինէր: Խեղճ երեխայ: Աւակովին զցած
մաշված հին շալը չէր կարեցանում ծածկել բա-

— 5 —

րակ հանդերձը, որ հագել էր այդ խեղճ աղջի-
կը: Գունատ երեսի վրա կարգացվում էր քանի
տարվայ թշւառութիւն ու վիշտ:—Նեղութեան
ու ցաւի մի պատկեր:

«Երեխան հիւանդ է երեռում», նկատեց պա-
րոն Բ.—ն յաւակցութեամբ, երբ տեսաւ աղջ-
կայ ցաւից ու վշտից մաշված դէմքը: «Սիրելիս,
ի՞նչ երգ կարող ես երգել: Խնդրեմ դարձեալ
երգիր այն գեղեցիկ երգը, որ քիչ առաջ ընդ-
հատեցին»:

Փոքրիկը շալը ետ քաշեց, ձեռքերը դրաւ
կուրծքին և պարզ սիրուն ձայնով, որը պատիւ
կը բերէր նոյնիսկ կրթված երգչուհին, երգեց
մի հասարակ երգ այն բաղդաւոր, երջանիկ երկ-
րի մասին ուր Յիսուսը տանում է իրաններին:

Թէ բովանդակութիւնը և թէ սիրուն ոգե-
ւորված երգեցողութիւնը չափազանց շարժեցին
երկու լսողներին էլ: Փոքրիկը վերջացնելուց
յետոյ պարոն Բ.—ն հարցրեց.

«Սիրելիս ո՞րտեղ ես սովորել այդ փառա-
ւոր երգը»:

«Կիրակնօրեայ դպրոցում», պատասխանեց
փոքրիկը:

«Միթէ հաւատում ես, թէ կայ մի ուրիշ
կեանք այնտեղ վերեռում, մի կեանք լի բաղդա-

64063-67

ուրութիւնով և ուրախութիւնով», շարունակեց
հարցնել պարոն Բ.—ն:

«Այս, պարոն, ես այդ հաստատ գիտեմ»,
պատասխանեց աղջիկը այնպէս վստահ, որ լը-
սողները զարմացած մնացին: «Այստեղ վերը ա-
ւելի գեղեցիկ երգեր պիտի երգեմ»:

«Այստեղ պիտի երգես, Այդ ովկ է ասել
քեզ», հարցրեց պարոն Բ.—ն:

«Մայրիկն է ասել», պատասխանեց երեխան
և փոքր ինչ տիրեց: «Նա ինձ հետ երգում էր
իմ երգը մինչև իր հիւանդանալը: Յետոյ ասեց
թէ իր բերանը այլիս չի կարողանում երգել»
բայց և այնպէս երգում և գովում է Տիրոջը
իր սրտի մէջ, և շուտով երկնքումը կ'երդի նա
իր օրհնութեան երգերը: Ախ, սիրելի մայրիկս
առաջ այնպէս բաղգաւոր չէր. բայց նրա հիւան-
դանալուց քիչ առաջ, եկաւ մեր տուն մի բա-
րեպաշտ կին և խօսեց նրա հետ Յիսուսից, Որը
եկել է անբաղդ մեղաւորներին փրկելու համար:
Եւ մայրիկս շատ լաց եղաւ, տառմ էր թէ ինքը
կորած է և Փրկիչ չունի: Ես ել շատ լաց էի լինում
և այլիս երգել չէի կարողանում: Այս կինը տվաւ
մեզ մի նոր Կտակարան և ես միշտ կարգում էի մօ-
րը համար. մի անգամ էլ կարգում էի այն տե-
ղը, որ տառմ է. «Ինձ մօտ եկէք ամեն վաստա-
կածներ և բեռնաւորուածներ եւ եւ հանգիստ կը

տամ ձեզ»: Եւ յանկարծ մայրս սկսեց բարձրա-
ծայն և ուրախ բացականչութիւններ անել. ինձ
սղմեց իր սրտին և ասեց որ խաղաղութիւն էր
գտել. որովհետև Փրկիչը սիրում է իրան և Նա
թողել է իր ամեն մեղքերը: Շուտով գրանից յե-
տոյ մայրս հիւանդացաւ և ես սախաված էի
ման գալ և երգել մի կտոր հացի համար, որով-
հետև հայրս էլ երկու ամսից ի վեր հիւանդ
պառկած էր: Ախ, սիրելի մայրիկս շատ նեղու-
թիւն քաշեց, բայց նա բաղգաւոր էր, մինչև որ
Տէրը վեր տուաւ նրան այս աշխարհից, որ եր-
կնքում օրհնութեան երգեր երգէ Տիրոջը»:

Վերջի խօսքելն ասելիս աղջիկը երկու ձեռ-
քով երեսը ծածկեց, որ չը տեսնեն իր թուշե-
րի վրայով զորվող արտասուքի մարզարիտի պէս
պայծառ կաթիւները:

«Բայց իհարկէ դու տւելի կը կամենացիր
ապրել և երգել այստեղ քո երգերը, քան թէ
մօրդ ետեից գերեզմանը գնալը, ասեց պարոն
Բ.—ն:

«Ոչ, ոչ», պատասխանեց փոքրիկը վառվե-
լով. «աւելի կը կամենացի լինել այստեղ, որ-
տեղ իմ բարի մայրիկն է: Ես արգէն զիտեմ, որ
շուտով նրա ետեից պիտի գնամ. որովհետև շատ
անգամ ես էլ մօրս պէս զգում եմ կողքի ծա-
կոց և նոյնպէս հագում եմ. այստեղ վերնում

այլեւ սոված չեմ մնալ, այնտեղ ամեն ինչ գեղցիկ է»:

«Բայց այդ որոնեցից զիտես դու», հարցուց անհաւատը:

«Մայրիկն է առել»:

«Բայց մայրիկը կարող է սփառված լինել»:

«Սխալված, ոչ երբէք: Որովհետեւ նա այդ կարգացել է Աստուծոյ խօսքում, և Աստուծ ոչ մի ժամանակ սուս չի խօսում»:

Եյդ հասարակ ու պարզ խօսքերը, որ աղջիկը ասեց այնպիսի մի նայվածքով, որը վկայում էր նրա անխախտելի ապաւինութեան մասին, այնպէս շարժեցին անհաւատ մարդի սիրտը, որ նա հազիւ կարողացաւ իր զգացումները զալել: Իր բարեկամը տեսաւ, բայց պահեց իրան, և իրան չը տեսնելու տվեց:

Յուզված պարոն Բ.—ն դրաւ երեխայի ձեռքի մէջ մի ոսկի դրամ: Զավագանց ուրախանաւով այդ առատ պարզեի համար փոքրիկը սենեակից զուրս եկաւ:

«Եկ գնանք նրա ետից», տսեց Բ.—ն իրանից ոչ պակաս շարժված բարեկամին. «Ես շատ կուգէի աւելի մօտից տեսնել այդ ինդեքտի թշւառութիւնը»:

Ուրախութիւնով համաձայնց բարեկամը և երկուսն էլ աննկատելի կերպով գնացին փոք-

րիկի ետեից, անցան քաղաքի շատ փողոցներով մինչև որ վերջապէս կանգնեցին մի փոքրիկ տան դրան առջե, որտեղից ներս էր մտել երեխան: Քիչ մտածելուց յետոյ իրանք էլ ներս մըտան: Շօշափելով անցան մի մութը նրբանցքով և վերջապէս հասան մի սենեակ, ուր նկատեցին հիւանդ հօրը յարդի վրա պառկած: Փոքրիկը չոքեց նրա առջե և պահմեց իր զիսի անցքը լարված ուշադրութեամբ ականջ գնող հիւանդին: Երկու բարեկամները լսեցին աղջկայ վերջի խօսքերը, որ ասեց. «Տես, հայր, ինչքան շատ փող ունիմ: Երկու սիրելի պարոններ տվին ինձ այդ փողը: Հիմա կարող եմ գէթ մի անգամ էլ մսից լու սննդարար սուփ պատրաստել քեզ համար: Տէր Յիսուսը այսօր իմ աղօթքս լսեց»:

Մինչի ծերունիի պատասխանելի երկու մարդիկը ներս մտան: Փոքրիկը վեր թռաւ տեղից և չտփագանց ուրախացաւ, ճանաչելով իր երկու բարեկամներին, և տարաւ նրանց հիւանդի պառկած տեղը: Հիւանդը մեկնեց գէպի նրբանց իր չոր ու մաշված ձեռքը և ասեց.

«Պարոններ, շատ շնորհակալ եմ ձեզանից: Քանի տարի է հիւանդ եմ և շատ անգամ է պատահում որ ես ու երեխաս քաղցած ենք միում: Տէրը վարձատրի ձեզ ձեր այդ բարեկամութեան համար»:

Շուտով խօսակցութիւն բացվեց և պարոն
Բ.—ն պատեհութիւն ունեցաւ այս վերջին ծայր
թշւառութեան վայրում տեսնել կենդանի հա-
ւատքի զօրութիւնը, որովհետեւ, չը նայած այս
աննկարազբելի թշւառութեան, մարդը իր կնոջ
մահից յետոյ Աստուծոյ հետ խազաղութիւն և
առատ մխիթարութիւն ունէր: Երկու բարեկամ-
ները հիւանդի մօտից վերջապէս հեռացան գնա-
ցին, խոստանալով կրկին շուտով նրա մօտ գալ:

Շատ անգամներ ացցելեցին նրան մի ամս-
վայ ընթացքում: Հիւանդը օրէցօր ետ էր գնում,
թէ և շնորհիւ երկու բարեկամների հոգացողու-
թեանը, այլևս ապրուստի նեղութիւն չէր քաշում
և երբ սրանք մի առաւօտ էլ մօտեցան այդ
տանը, հանդիպեցին յուղարկաւորութեան: Ծե-
րունին մեռել էր և փոքրիկ երգչունին բոլորո-
վին որբ մնացել: Բացի դրանից և հիւանդ էր:
Բարեկամները երեխային պառկած գտան նոյն
տեղում, որտեղից Աստուծած ազատել տարել էր
նրա հօրը երկարատեւ հիւանդութիւնից յետոյ:
Նա գունատ էր, այդ վերջի օրերը բոլորովին
փոխված էր նա: Միայն թէ նրա երեսի վրա
նկատվում էր մի տեսակ պայծառութիւն, և
կապուտ աչքերը ուղղած նայում էր իր առջեր
նստած պարոն Բ.—ի երեսին:

«Իու շատ հիւանդ ես, զաւակու: Յաւդ շատ

է», հարցը նա կարեկցաբար:

«Ոչ, պարոն», պատասխանեց նա ժպտալով:
«Ես ցաւ չեմ զգում. շատ բաղդաւոր եմ: Իմ
հայրս վերև գնաց, և հիմա Տէրը շուտով ինձ
էլ կը տանի»:

Մի առ ժամանակ նա լուս մնաց: Յետոյ
գարձեալ սկսեց խօսել և ասեց.

«Ո՞հ թէ կարողանայի մի երգ էլ ձեզ հա-
մար երգել»:

«Ե՞թէ կը կամենայիր երգել»:

«Ո՞հ, իմ սրտիս մէջ այն սիրուն երգերը
ամենը շատ աւելի զեղեցիկ են հնչում, քանիթէ
առաջ: Հիմա այլևս չեմ կարողանում երգել.
Բայց վերը Յիսուսի մօտ գարձեալ պիտի եր-
գեմ, այնտեղ էլ հիւանդ չեմ լինիլ»:

«Ե՞թէ այնպէս շատ սիրում ես քո Փըրկ-
չին, որ կամենում ես նրա մօտ երգել», հարց-
րեց պարոն Հ.—ն:

Նոյն բողեին երկնային ուրախութեան մի
ճառագայթ լուսաւորեց մեռնող երեխայի գէմքը
և նա սրտի խորքից ասեց.

Միրում իմ Նրան. Նրան, որ իմ մեղքե-
րըս խաչի վրա կը ել և որ հիմա ինձ պիտի տա-
նի, որպէս զի յաւիտեան իր մօտ լինեմ: Այս,
ես Նրան սիրում եմ. բայց— Նա սեիլի է սիրով
ինձ. ոչ մի օքրդ չի, իտրող ինձ Նրա պէս սիրել»:

Պարոն Բ.—Ն նայում էր գետնին: Երեխայի ուրախութիւնը բաց արաւ նրա սեփական թըշւառութիւնը, և երկսայրի սուրի պէս նրա հոգով անցաւ հետեւալ հարցը. ԱրդՅօք դու էլ կարող ես այդպէս ուրախ և հանդիսաւ մահին դիմաւորել: Մի հայեացը էլ զցեց նա իր փոքրիկ բարեկամուհիի ուրախութիւնից փայլող երեսի վրա և այլս չը կարողացաւ դիմանալ, զգացմունքներից յաղթահարված սկսեց բարձր ձայնով լաց լինել:

«Լաց մի լինիք, ո՞հ, լաց մի լինիք», խընդրեց փոքրիկը: «Տեսէք, ես ինչպէս բաղդաւոր եմ—երջանիկ եմ, ես շատ նեղութիւն էի քաշում, երբ հայրիկս ու մայրիկս հիւանդ էին. բայց մայրիկս ասեց, որ Տէր Յիսուսը շուտով վերջ կը տայ ամեն ցաւերին: Հիմա Նա վերջ պիտի տայ, և ես շատ բաղդաւոր եմ: Նա այնպէս առաջնորդեց որ դատայ ձեզ այնտեղ հիւրանոցումը. դուք շատ բարիք էք արել ինձ և իմ հօրու և հայրս ասեց, որ Տէրը ձեզ կ'օրհնի և բաղդաւոր կ'անի: Բայց—մի, ես շատ յոդնած եմ և կը կամենայի քնել:

Նա մի քանի խօսքեր էլ ասեց, յետոյ քունը նրան յաղթեց: Բարեկամները լուռ միմեանց նայեցին, յետոյ սկսեցին դարձեալ դիտել նընջողին:

«ԱՌԻ», վերջապէս ընդհատեց պարոն Բ.—Ն լսութիւնը, «իմ ամբողջ կարողութիւնս կը տայի եթէ իմ սիրտս էլ կարողանար այդպիսի խաղաղութիւն վայելել»:

«Դու կարող ես ձրի ստանալ», տաեց բարեկամը: «Եզիր այդ երեխայի պէս, որ միամտութիւնով հաւատում է Յիսուսին: Թող Քրիստոս նուածէ և հնագանդեցնէ քո միաքը: ԱրդՅօք պէտք չէ որ միաքդ լոէ այդպիսի մի հաւատքի դիմաց, որը նոյնիսկ մահվան ժամեն այդպէս բաղդաւոր է անում այս խեղճ երեխային:

Պարոն Բ.—Ն լոեց: Աստուծոյ սիրոյ կարողութիւնը սաստիկ շարժեց նրա սիրտը: Փոքրիկի ննջելլ քանի ժամեր տեսց. բայց երկու բարեկամներն էլ իրանց սուրբ պարտաւորութիւնն էին համարում չը թողնել մահվան ժամին իրանց փոքրիկ բարեկամուհին: Պարզ էր որ նրա ազատութեան ժամը արագօրէն մօտենում էր: Շնչառութիւնը անկանոն էր. երեսը միշտ աւելի և աւելի մահվան զոյն էր ստանում:

Վերջապէս նա շարժվեց: Աչքերը դարձնում էր այս ու այն կողմ. բայց երեսը էր, որ նա այլևս ոչ ոքի չէր ճանաչում:

Պարոն Բ.—Ն կուցաւ և հարցրեց. «Բաղդաւոր ես, սիրելիս»: Երեսը էր նա ականջ էր զնում. յետոյ մի աննկարազրելի դէմքով աչքե-

ըւ գէպի վեր ուղղեց, ուրախութեան ճառագայթը սփովեց նրա երեսի վրայով. և իր վերջի ձիգը թափելով ձեռքերը վեր բարձրացրեց և շըշնչաց. «Յիսուս,—վաստա՛ւր, —երգե՛լ»:

Զեռքերը թուլացան ու ընկան. յոզնած զլուխը թեքվեց բարձի վրա. աշքերը կամաց-կամաց լոյսից զրկվեցին. մի փոքրիկ թառանչ էլ—և փոքրիկ երգչուհին գնաց տուն, որպէսպի յաւիտենական օրհնութեան երգեր երգէ Գառին, Որ նրան գնել էր:

Կարծես զետնին բևեռւած կանգնած էր պարոն Բ. Ա փոքրիկ դիակի առջե: Զարմանալի է, այդ զօրաւոր մարդը, որը մի ժամանակ իր անհաւատութիւնում տում էր. Ես չեմ կարող ընդունել, ինչ որ չեմ հասկանում», փշրվեց տեսնելով հաւատքի կարողութեան յայտնութիւնը ի գիմաց ահեղ թագաւորին: Նրա խստացած սիրաը հարվեց: Այն որ չէր հասկանում, աշքով տեսաւ: Մի անգամ էլ աշքը դցեց մեռնովի վրա: Աւազ, իր փոքրիկ բարեկամուհիի ճակատը մարմարի պէս սառն էր. նրա աշքի կենսալից փայլը հանգված էր. բայց գունատ կերպարանքի վրա տարածված էր սուրբ խաղաղութիւնը: Յետոյ դիմեց իր բարեկամին և լուրջ ձայնով հարցրեց,

«¹ որո՞դ ես ինձ հետ աղօթք անել»:

Եի այն փոքրիկ երգչուհին գիի պառ-կած տեղը, որի երգերն այս երկրի վրա արդէն վերջացել էին, երկու բարեկամ-ները ժունկ դրին և հառաջանքներ բար-ձրացրին անհաւատի մեղքերի թողութե-անհամար, և աադ հառաջանքնքը փոքր առ փոքր փոխվեցին Օրհնութեան երգերի: Նրանք սկսեցին բարձր ձեյնով գոհանալ Աստծուն նրա փառավոր շնորհքի համար: Այո, շնորհքը յաղթել էր. Բուն իսղաղաբութիւն գտաւ Յիսուսի հաւատքով և գր-կելով իր բարեկամին բացականցեց. , , Օրհնեալ է Աստծուած, հիմա ես էլ գի-տեմ , որ իմ մեղքերս յաւիտեան ջնջ-ված են, , :

Սիրելի ԸՆԹԵՐՑՈՂ ԿԱՐՈՂ ԵՍ ԴՈՒ Օ-ԷԼ ԱՅՍՊՈՍ ԱՍԵԼՔ:

ԳԻՆԸ 3 ԿՈՂ.

, , Բարի Լուր,, քրիստոնէական թերթը
հրատարակվում է ամիսը երկու անգամ
Տարեկան բաժանորդագինն է 2 ռուբլի։
Հասցեն。 Բաքու իմբեագրութիւն
,, Բարի Լույս,, .

ՀՀ Ազգային գրադարան



NL0160740

